



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

796

Մ-34

ԹՅՈՒՆ ՀԱՅԶ ՖԻԶԿՈՒԼՏ ԳԵՐԻՈՐԶԴԻ

Մ. ՄԼԲ.

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

ՄԳՈՐՏ ԴԱՐԺՈՒՄ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ

1931

726
5-34
Այս


Բուրժուական դադափարախոսները աժե-
նուրեք տարածում են այն միտքը, վոր իբր թե
կուլտուրան ընդհանրապես և ֆիզիկուլտուրան
մասնավորապես վոչ մի առնչություն չունի
քաղաքականության հետ և, ինչպես նրանք են
ասում, — «չի կարելի ֆուտբոլ խաղալ կոմու-
նիստորեն կամ բուրժուականորեն», վոր «խա-
ղի որենքները նույն են» և այլն:

Բոլորիս համար պարզ պետք է լինի, վոր
խոսքը ֆուտբոլ խաղալու մասին չէ, այլ տվյալ
սպորտ կազմակերպության դադափարական ու
կազմակերպչական ելույթյան մասին ե, թե
ուժնից ե նա սնվում և ում շահերի համար ե նա
ծառայում:

Սպորտ շարժումը քաղաքական ֆակտոր ե
և նրան այս կամ այն դասակարգը մոտենում ե
իր շահերի տեսակետից: Այս նկատառումով
յեթե նայելու լինենք ներկայիս միջազգային
սպորտ շարժանը, ապա կտեսնենք, վոր այն-
տեղ դոյություն ունի յերեք տարբեր հոսանք-
ներ: —

1) Բուրժուական սպորտ, վորը միացված
ե միջազգային ոլիմպիական կոմիտեյով:

2) Լյուցերն Սպորտի Ինտերնացիոնալ —



15283-57

կոչումով բանվորական, բայց եյությամբ ու-
Փորմիստական:

3) Հեղափոխական բանվորական սպորտ
շարժում, վորի գլուխն է կանգնած Կարմիր
Սպորտ Ինտերնացիոնալը, (Կ. Ս. Ի.):

Առաջին յերկուսը իրենց գործունեյու-
թյամբ վերջին հաշվով գալիս միանում են մի
կետում, այն է բուրժուական հասարակակար-
գի պաշտպանությունը, իսկ 3-րդը (Կ. Ս. Ի-ն)
պայքարում է բանվոր դասակարգի հետ միա-
սին հանուն կապիտալիստական հասարակա-
կարգի տապալման ու սոցիալիստական կար-
գերի ստեղծման: Սրանց մասին է, վոր մենք
ստորև կտանք մեր Ֆիզկուլտ մասսայի համար
կարճատև, բայց անհրաժեշտ տեղեկություն-
ներ:

ԲՈՒՐՇՈՒԱԿԱՆ ՍՊՈՐՏ ՇԱՐՇՈՒՄ:

Բուրժուական սպորտ շարժումը իր սկիզբն
ունի դեռ 1860-ական թվականներից (այդ ժա-
մանակվանից է, վոր կազմակերպություն
հայտնի բուրժուական կազմակերպություններ
«Բադեյակիան սպորտ միություններ»-ը):

Կապիտալիզմի զարգացման հետ միասին
շարունակ աճել ու զարգացել են նրա սպորտ
միությունները ու տարածել իրենց ցանցը, բո-
լոր յերկրներում:

Աճումը կատարվել է բացի բուրժուական
և մանր բուրժուական տարրերից, մեծ թվով
նաև բանվորական տարրերի հաշվին:

1928 թվի ալյալներով ամբողջ աշխար-
հում բուրժուական սպորտ միությունների մեջ
կային մոտ քսան միլիոն հոգի, վորոնցից վոչ
պակաս տասնհինգ միլիոնը բանվորներ ու
աշխատավորներ են:

Իսկ յեթե վերցնենք խոշոր և աչքի ընկնող
յերկրները առանձին-առանձին, նույն այդ թվի
տալյալներով կտեսնենք վոր՝

Գերմանիայում բուրժուական սպորտը ունի	5,000.000 հոգի.
Ֆրանսիան և Ելզաս Լոտարինգյան	850.000 »
Չեխոսլովակյան	900.000 »
Նորվեգիան	60.000 »
Ամերիկան	5,000.000 »
Անգլիան	2,000.000 »
Ֆինլանդիան	30.000 »

Բուրժուազիան ու նրա պետությունը—
չատ են մտածում իրենց սպորտ կազմակերպու-
թյունների մասին, ոժանդակում նրանց նյու-
թապիս և ստեղծում բոլոր պայմանները նրանց
զարգացման ու ցանցի տարածման համար:

Կապիտալիստները իրենց գործարաններին
կից կազմակերպում են սպորտ խմբեր, տալիս
են նրանց մարզադաշտեր, դահլիճներ ու բոլոր
տեսակի հարմարություններ և բանվորների
աչքին յերեվում են վորպես բարեգործներ:

Սակայն այդ «բարեգործները» լավ գիտեն
իրենց հաշիվները՝ ներգրավելով բանվորու-
թյանը սպորտի շարքերը, նրանց նպատակն է
կտրել բանվոր դասակարգի ուշադրությունը
քաղաքական կյանքից և դասակարգային պայ-
քարից, սերմանել յերիտասարդության մեջ

այն միտքը, վոր «սպորտ հրապարակները հաշտեցնում են դասակարգերը»:

Այսպես որինակ, անդլիական հանքագործների հռչակավոր ընդհանուր գործադուլի ժամանակ (1926 թվին) բուրժուազիան պրոֆբյուրոկրատների միջոցով կոչ եր անում գործադուլավոր բանվորներին «գնալ դեպի մարդադաշտերը պարապ ժամանակը իզուր չանցկացնելու համար»: (?!) Յեվ իրոք նրանց հաջողվեց բանվոր ֆուտբոլիստներից մի խմբակ այդ որերին դուրս բերել վոստիկանական ֆուտբոլի խմբակի հետ «ընկերական մրցման» (!!!)

Բոլոր յերկրներում բուրժուազիան դործադուլների ժամանակ կազմակերպում ե այդպիսի «ընկերական հանդիպումներ», իսկ կարիքի դեպքում դուրս ե բերում իր սպորտ խմբերը բանվորների դեմ թե վոստիկանությանը ոգնելու ե թե շտրեյկբրեյկերների դեմ կատարելու համար:

ՀՈԳՈՒՏ ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԿՈՐԾԱՆԻՉ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ

Սակայն դրանով չի սահմանափակվում բուրժուական սպորտ կազմակերպությունների դերը կապիտալիստական յերկրներում: Իրենց խարխլվող հիմքերը պահպանելու ե նորանոր շուկաներ ձեռք բերելու համար իմպերիալիստները պատերազմների պատրաստություններ են տեսնում: Ամենուրեք ուժեղացվում ե

ռազմաշինարարությունը ու միլիտարիզացիայի յե յենթարկվում ազգաբնակչությունը— (մանավանդ նրա կազմակերպված մասը, ինչպիսին են պրոֆմիլությունները ե այլն):

Այս գործում մեծ դեր են խաղում բուրժուական սպորտ կազմակերպությունները—

ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ.— Բուրժուական սպորտ միլությունները յենթարկվում են ռազմական միլիտարությանը, վորը իր ռֆիցերներին ուղարկում ե այդտեղ աշխատելու վորպես հրահանգիչներ:

ԻՏԱԼԻԱՅՈՒՄ.— Ֆաշիզմի լծի տակ տառապող աշխատավոր յերիտասարդության ռազմականացումը կատարվում ե պարտադիր կերպով, բայց անուղղակի ճանապարհներով, վորոնց մեջ մեծ դեր են խաղում սպորտ միլությունները:

ՉԵԽՈՍԼՈՎԱԿԻԱՅՈՒՄ.— Սերտորեն կապված լինելով բարձրագույն զինվորական մարմինների հետ, բուրժուական սպորտ միլությունները ունեն մեծ քանակությամբ զենքի պաշար:

ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ.— 1914-18 թ. իմպերիալիստական կռվում, պարտություն կրելուց հետո Վերսալյան դաշնագրի շնորհիվ, կրոնատվեց ու սահմանափակվեց նրա ռազմական ուժերը: Այստեղ տարածված ե ազգաբնակչության գաղտնի միլիտարիզացիան, գլխավորապես սպորտ միլությունների միջոցով:

Նույն դրությունն և տիրում նույնպես
Նորվեգիայում, Շվեդիայում, Լեհաստանում
և այլ խոշոր ու մանր կապիտալիստական յեր-
կրներում:

Յերբ ընկ. Լիտվինովը ժնեվի «գինա-
թափման» հանձնաժողովում խիստ մերկացնե-
լով բուրժուական այսպես ասած «գինաթափ-
ման» կեղծ ու խաբուսիկ իմաստը— առաջար-
կեց Խ. Ս. Հ. Ս-ի տեսակետը իսկական գինա-
թափության մասին— բուրժուական սպորտի
ղեկավարներից մեկը իրենց բազմամարդ մի-
տինգում հայտարարեց, վոր «վոչինչ չի կարող
ստիպել գինաթափ անելու Փիզկուլտուրային»:

ՖԱՇԻՉՄԻ ՈՒՂԻՈՎ

Ներկայումս արդեն բոլոր յերկրներում կա-
տարվում է բուրժուական պետությունների
Փաշիզացիան— այսինքն կառավարության
գլուխ են անցնում խոշոր բուրժուազիայի կու-
սակցությունները, հսկայական գումարներ են
տրամադրվում սպառազինումների վրա, ուժե-
ղացվում է պոլիցիայի կազմը, ռեֆորմիստա-
կան պրոֆմիտություններում ֆաշիստները
գնում են իրենց մարդկանց, յեղածններին ել
կաշառում են, կրճատում են բանվորության
աշխատավարձը, յերկարացնում բանվորական
որը, արգելվում են բանվոր դասակարգի բոլոր
հեղափոխական կազմակերպությունները (Հեղ
պրոֆշարժում, Կարմիր ճակատայիններ,
Սպորտ միություններ և այլն) և ուժեղ ճնշում

են գործ դնում բանվոր դասակարգի միակ ա-
ռաջնորդ կոմ. կուսակցությունների վրա:

Այս բոլորը բուրժուազիան կատարում է
իր կուսակցությունների ու մարտական կազ-
մակերպությունների ոգնությամբ ու անմի-
ջական մասնակցությամբ: Բուրժուական
սպորտ միությունները լինելով կապիտալիս-
տական հասարակարգի լավագույն պաշտպան-
ներից մեկը, պարզ է, վոր չեն կարող զերծ
մնալ նաև իրենց տերերի այդ ձեռնարկումնե-
րից: Յենթարկեցնելով իր 20 միլլիոնանոց
մասնան ֆաշիզմին նա աշխատում է.—

ա) քողարկել սպորտ շարժման դասակար-
գային բնույթը ու աշխատավոր մասսայի ու-
շագրությունը խուսափեցնել դասակարգային
պայքարից:

բ) Սմրացնել սպորտսմենի մեջ մասնավոր
սեփականատիրական, անհատականության,
ռեկորդսմենի ու ռեակցիոնների ձգտումները:

գ) Ոգտագործել այդ շարժումը կապիտա-
լիստական արտադրության բարձրացման հա-
մար:

դ) Ոգտագործել այդ կազմակերպություն-
ներին— հանուն բուրժուազիայի դասակարգա-
յին շահերի պաշտպանության (լրացնել բանա-
կի, պոլիցիաների և շտրեյկբրեխերների շար-
քերը)— ընդդեմ բանվոր դասակարգի հեղա-
փոխական պայքարի, նրա առաջնորդ կոմ.
կուսակցությունների ու համաշխարհային հե-
ղափոխության հենարան Խ. Ս. Հ. Ս-ի: Այս-

պիտույ չնայած բուրժուական սպորտի մասնա-
յական լինելը (20 միլիոն) նա իր եյությամբ
բացահայտ հակահեղափոխական— ֆաշիստա-
կան մի կազմակերպութիւնն է:

ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՍՊՈՐՏ ՇԱՐՔՈՒՄ ՅԵՎ ԼՅՈՒ- ՑԵՐՆԻ ՍՊՈՐՏ ԻՆՏԵՐՆԱՅԻՈՆԱԼԸ

Առանձին բանվորական սպորտ միու-
թիւնները իրենց սկիզբը առել են դեռ սրանից
40-50 տարի առաջ. (որինակ գերմանական
տուրիստական միութիւնները), վորոնք աճել
ու զարգացել են իրարից անկախ, զանազան
յերկրներում: 1913-14 թվականներից սկսվում
են առաջին փորձերը, համախմբելու բոլոր
յերկրների ցաք ու ցրիվ բանվորական սպորտ
միութիւնները և կազմելու բանվորական
սպորտ մարմնամարզական կազմակերպու-
թիւնների ինտերնացիոնալ: Այդ առթիվ
1914 թվին Բրյուսելում կայանում է խորհրդ-
դակցութիւն. բայց վրա հասած իմպերիալիս-
տական պատերազմը հողս է ցնդեցնում այդ
գաղափարը:

Միայն 1920 թվին 12/X- Լյուցերն քաղա-
քում, սոց. դեմոկրատիայի ջանքերով վերջ-
նականապէս կազմակերպվում է միջազգային
բանվորական սպորտ ինտերնացիոնալ (Լյու-
ցերնի Սպորտ ինտերնը, կրճատ Լ.Ս.Ի.), վո-
րը իր շուրջն է համախմբում բոլոր կապիտա-
լիստական յերկրներում գտնվող բանվորական
սպորտ միութիւնները:

1928 թվին նա ուներ իր մեջ ընդգրկված

1,650,000 անդամ, վորոնք գտնվում էին 20
յերկրներում— 47 կազմակերպութիւնների
մեջ:

ՍՈՑ.-ԴԵՄՈԿՐԱՏԻԱՅԻ ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐՈՎ

Իր կազմակերպման հենց առաջին որից Լ.
Ս. Ի-ն հայտարարեց, վոր նա միայն սպորտիվ
կազմակերպութիւնն է, վոր նա քաղաքական
անցուղարձին չի մասնակցելու և վոր նա չեզոք
է մնալու հանդէպ այս կամ այն քաղաքական
կուսակցութեանը:

Բայց հակառակ իրենց այդ հայտարարու-
թիւններին, մենք տեսնում ենք, վոր հետզհե-
տե գնալով, Լ. Ս. Ի. մոտենալը ու վերջնակա-
նապէս 2-րդ ինտերնացիոնալի ազդեցութեան
տակ ընկնելը ակներև է դառնում: Իսկ ար-
դեն 1927 թվին Լ.Ս.Ի. կոնգրեսում, կայացած
Հելսինգֆորս քաղաքում, ընդունված է յեղել
մի բանաձև, վորտեղ նրանք ուղղակի առաջար-
կում են իրենց սեկցիաներին «կապվելու իրենց
յերկրների սոցիալիստական կուսակցութիւն-
ներին, ինչպէս և 2-րդ ու ամստերդամյան դե-
ղին ինտերնացիոնալի հետ»:

ԸՆԴԴԵՄ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՍՊՈՐՏԻ ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆԸ

1924-25 թվերից կապիտալիզմի հակասա-
կան ստաբիլիզացիայի հետեւանքով բանվոր
դասակարգի մեջ տեղի յե ունենում ձախա-
ցում, վորը անդրադառնում է նաև բանվոր

դասակարգի բոլոր կազմակերպությունների վրա, վորոնց թվում և բանվորական սպորտի:

Լ. Ս. Ի. շարքերում յեղած բանվոր սպորտամեններն իրենց համակրանքն են հայտնում հանդեպ Խ. Ս. Հ. Մ-ին ու նրա սպորտը ինչպես և Կարմիր Սպորտիւնտերնը (Կ. Ս. Ի.):

Լ. Ս. Ի. ղեկավարները ուժեղ կամպանիա տարան իրենց մասսաների այդ ձգձգումների դեմ, խանգարիչ հանդիսանալով նրանց Կ. Ս. Ի. և Խ. Ս. Հ. Մ-ի հետ մոտեցմանը:

1926 թվին նկատի ունենալով, այն ժամանակվա կապիտալիստական ստաբիլիզացիայի հետեւանքով բուրժուական սպորտի ուժեղացումը և բոլոր այն մեթոդները, վորով կապիտալիստները ներգրավում են բանվորներին իրենց սպորտ կազմակերպությունների մեջ ու քայքայում պրոլետարիատի շարքերը, Կ. Ս. Ի. կողմից առաջարկություն է արվում Լյուցերնի Սպորտիւնտերին— ստեղծելու պայքարի միացյալ ճակատ ընդդեմ բուրժուական սպորտի:

Չնայած Լ. Ս. Ի. ղեկավարների սարսուռ-թի, այնուամենայնիվ մասսաների ճնշման տակ, մեզ հաջողվում է Լ. Ս. Ի. վորոշ կազմակերպությունների հետ մերձենալ: Այդ ժամանակներումն էր, վոր կազմակերպվեցին մրցումներ Խ. Ս. Հ. Մ-ի, գերմանական, ֆրանսիական ու այլ բանվորական սպորտ խմբակների միջև: Միացյալ մրցումների արդյունքները այն է լինում, վոր արտասահման-

յան բանվորական մասսաների հետաքրքրությունը— հանդեպ Խ. Ս. Հ. Մ-ի ավելի յեռուժեղանում և մենք ստանում ենք մի շարք յերկրների բանվորական սպորտ կազմակերպություններից դիմումներ, մեզ հետ համագործակցելու մասին:

Բայց Լ. Ս. Ի. ղեկավարները անցան բացարձակ սարսուռի և յերբ 1927 թվին, Լ. Ս. Ի. կոնգրեսին, Կ. Ս. Ի. կողմից ուղղվեց մի նամակ վորով վերջնականապես պահանջում էր բուրժուական սպորտի դեմ միացյալ ֆրոնտ ստեղծելու— նրանք պատասխանեցին—

«Միացում Մոսկովյան ինտերնացիոնալի (խոսքը Կ. Ս. Ի. մասին է) հետ անհնար է, քանի վոր հակառակ կողմը (այսինքն Կ. Ս. Ի-ն) վոչինչ չի արել մեղմացնելու գոյություն ունեցող հակասությունները» (??): Այստեղ անհրաժեշտ է հարց տալ— թե ինչ հակասությունների մասին են նրանք խոսում?— յերեվի նրանք ուզում են, վոր Կ. Ս. Ի-ն հրաժարվի դասակարգային պայքարից և ինչպես իրենք են անում— ծառայի բուրժուազիայի շահերին:

ԼՍԻ-ն ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ԻՐԱՎԱԿԱԳԻ
ՊԱՇՏՊԱՆՆ Ե

Գերմանական բանվորական սպորտի ղեկավար—սոցիալ-դեմոկրատ Ֆրից Բելգանդը, մոտիկ անցյալում իր ճառերից մեկում, շատ պարզ կերպով ասեց— «Այնպիսի մասսայական շարժում, ինչպիսին է սպորտ շարժումը, չի

կարող անտարբեր վերաբերվել հանդեպ պետութեանը: Հասկանալի յե վոր բոլոր սպորտ միութիւնների պահանջն է, վոր պետութեանը հովանավորի նրանց. բայց այդ պահանջը մենք պետք է հիմնավորենք նրանով, վոր մեր բոլոր ֆիզիկուլ կազմակերպութիւններն ել իրենց հերթին ծառայում են պետութեան համար... և աշխատում են պետութեան դրութիւնը բարելավելու համար:

Այսպիսով «Բանվորական սպորտի» ղեկավար սոց.-դեմոկրատ Բելլանգը կոչ է անում բանվոր դասակարգին վորպեսզի նա պաշտպանի բուրժուական պետութեանը: Նա դեռ ավելի հեռու յե գնում՝

«Մենք պահանջում ենք (ասում է Բելլանգը), վոր պետութեանը մեզ ոգնի, այնպես ինչպես նա ոգնում է բուրժուական սպորտ շարժմանը, մենք ունենք իրավունք պահանջելու այդ, վորովհետեւ այդ հարցում (պետութեան վերաբերմունքի հարցում), մեզ մեզ գոյութիւն ունի լրիվ համագործակցութիւն (...» !!! (ընդգծումը մերն է Մ. Մ)

Ինչպես տեսնում ենք, իրենք, սոցիալ-դեմոկրատները չեն ժխտում, վոր նրանք կապիտալիստական պետութեան պաշտպաններն են: Մենք մեր կողմից միայն շնորհակալութիւն ենք հայտնում «բանվորական» սպորտի ղեկավարին իրեն խոստովանանքների համար:

Բոլոր յերկրներում, սոցիալ-դեմոկրատիան ներկա չըջանում, բացահայտորեն կանգնած է բուրժուական իրավակարգի պաշտպանութեան դերում, վարում է ֆաշիստական քաղաքականութիւն, մթաղնում բանվորների դասակարգային գիտակցութիւնը, քայքայում բանվոր դասակարգի շարքերը, խաբում աշխատավոր մասսաներին և հարմար ըոպելին ճնշում բանվոր դասակարգի հեղափոխական կազմակերպութիւններին:

Դեռ 1929 թվին Կոմիւնտերնի Դործկոմի 10-րդ պլենումը արձանագրեց, վոր սոցիալ-դեմոկրատիան արդեն ձեւափոխվել է վորպես սոցիալ-ֆաշիստական կուսակցութիւն: Լ. Ս. Ի-ն իր հերթին ամբողջապես լինելով սոց.-ֆաշիզմի ազդեցութեան տակ, ամենուրեք ոգնում է նրան իր դավաճանական գործունեւութեան մեջ, գործակցում է բուրժուազիայի ու նրա սպորտ միութիւնների հետ ընդդէմ բանվոր դասակարգի հեղափոխական պայքարի և Կարմիր Սպորտ Ինտերնի:

Լ. Ս. Ի. ղեկավարները արդեն բացարձակորեն հայտարարում են, վոր նրանք անհաշտ դիրք են բռնել հեղափոխական բանվորական սպորտ շարժման դէմ: Դրանից յելնելով նրանք սկսել են իրենց շարքերի «ստուգումն ու գտումը»:— Նրանց սեկցիաներից հեռացվում են դասակարգային գիտակից բանվորները, վորոնք պարզորեն մերկացնում են Լ. Ս. Ի. վնտ-

«արար գործունեությունը: Եվ չցատրիայում
«Սորբուրգ» անունով բանվորական սպորտ ա-
կումբը հեռացվել է Լ. Ս. Ի. շարքերից, այն
պատճառով, վոր նրանց ֆուտբոլիստները մըր-
ցում են կազմակերպել գերմանական հեղափո-
խական բանվորական սպորտի հետ:

Հեռացվել են Բագել քաղաքի վեցը գիմ-
նաստիկ խմբերը դարձյալ նույն պատճառով:
Հեռացվել են նաև բոլոր այն բանվոր սպորտ-
ամենները, վորոնք մասնակցել էին 1928 թվի
համամիութենական սպարտակիպդային: Հե-
ռացման դեպքերը վերջերս այնքան են շատա-
ցել, վոր բոլորը թվելու հնարավորություն
չկա:

Հեռացնելով սպորտ միություններից բո-
լոր գիտակից բանվորներին, աշխարհով նրանք
ջլատում են բանվոր դասակարգի ուժերը ու
թուլացնում նրան, բուրժուազիայի հարձակ-
ման առաջ:

Այս բոլորից հետո մենք հարց ենք տալիս
ել ո՞ր մնացին նրանց ճոճան խոսքերը «հեղո-
թության» ու «քաղաքական անցուղարձին
չմասնակցելու» մասին (??):

Պարզ է, վոր այս տակտիկան նրանք բա-
նեցնում են բանվոր դասակարգին խաբելու ու
2-րդ ինտերնացիոնալի գործը առաջ տանելու
համար:

ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՍՊՈՐՏ ՇԱՐԺՈՒՄ՝

Կ. Ս. Ի. ՈՒՆՐԱ ՊԱՅԳԱՐԸ

Կապիտալիստական ամբողջ սիստեմն (ար-
տադրական ու պետական) վատթարացնում է

բանվոր դասակարգի դրությունը ու շնորհիվ
կապիտալիստական ուժեղ շահագործման,
(ռացիոնալիզացիայի, վատ սնունդի, բնակա-
րանային վատթար պայմանների և այլն) քա-
ղաքում է բանվորության ֆիզիքական առող-
ջությունը: Լ. Ս. Ի-ն կրելով «բանվորական»
կոչումը, սերտորեն կապված է սոց.-դեմոկրա-
տական ու ամատերդամյան դեղին ինտերնա-
ցիոնալի հետ և նրանք միասին գործում են
բուրժուազիայի ու նրա սպորտ միությունների
ոգտին ու իրենց յերկդիմի քաղաքականու-
թյամբ մթազնում բանվոր դասակարգի գի-
տակցությունը: Այս բոլորը ի նկատի ունենա-
լով— Կոմինտերնի ԿԻՄ-ի ու Կարմիր Պրոֆին-
տերնի ձեռնբեցություններ 1921 թվի 26 հուլի-
սի Մոսկվայում կազմակերպվում է Կարմիր
Սպորտ Ինտերնացիոնալ (Կ. Ս. Ի.), վորը մի-
ացնում է իր շուրջն է համախմբում բոլոր յեր-
կրների բանվոր դասակարգին հարազատ ու
հեղափոխական պայքարի տեսակետի վրա
կանգնած սպորտ խմբերը ու միությունները:

Կ. Ս. Ի. առաջին կոնգրեսը լինում է նույն
այդ ժամանակամիջոցում (1921 թ.), 2-րդ և
3-րդ կոնգրեսները անցնում են կազմակերպչա-
կան շրջանի պայմաններում, յերբ Կ. Ս. Ի-ն
նորանոր սեկցիաներ է ընդունում իր մեջ—
քայքայում գցելով Լ. Ս. Ի. ու բուրժուական
սպորտի շարքերը:

1923-24 թվականներին բանվորական
սպորտ շարժման համար վորոշ դադարի առ-

բիւնք ելին: Այդ բացատրվում է ընդհանուր բանվորական շարժման տեղատվութեամբ, վորը տեղի ունեւր այդ ժամանակներում: Կապիտալիզմը գտնվելով իր ստաբիլիզացիայի առաջին շրջանում, ուժեղացրեց հարձակումը բանվոր դասակարգի վրա (գերմանական հեղափոխութեան սպարտությունը բանվորական որվա յերկարացումը Գից 10 ժամ, կապիտալ. ազդեցիկացիայի ուժեղացումը և այլն):

Բուրժուազիայի աշխուժացման հետ միասին, աշխուժանում են և նրա սպորտ կազմակերպությունները, աճելով ու ծավալելով իրենց ցանցը:

1925-26 թ. բանվոր դասակարգի հեղափոխական շարժման ալիքը սկսում է բարձրանալ, վորի հետեւանքով աշխուժանում ու աճում են բանվորական սպորտ միությունները:

Բացի սրանցից Լ. Ս. Ի. շարքերում յեղան

Յեթե 1923-24 թ. Թ. Կ. Ս. Ի-ն ուսներ	1926 թ. նա ունենր	Իսկ 1927 թ. արդեն
ԽՍՀՄ մոտ 2 000.000 հոգի	2.000.000	3.000.000
Ֆրանսիայում 4000 »	7.000	8.000
Նորվեգիայում 6000 »	9.000	12.000
Չեխոսլովակ. (Տեղեկ. չկա)	100.000	120.000
Արգենտինա » »	1.400	1.700

մեծ քանակութեամբ բանվորներ, վորոնք գիտակցեցին իրենց դասակարգային շահերը և

բռնեցին սպորտը իրենց հանդեպ Լ. Ս. Ի. ու նրա ռեֆորմիստական ղեկավարները: Սրանք բոլորը իրենց հակակրանքն են հայտնում Կարմիր Սպորտ Ինտերնին:

ՀԱՆՈՒՆ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՍՊՈՐՏԻ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ

Իր գոյութեան առաջին որից Կ. Ս. Ի-ն անընդհատ պայքարում է բանվորական սպորտի մեջ հեղափոխական միասնականություն մտցնելու համար— թե ազգային և թե միջազգային մասշտաբով: Ինչպես վերը հիշեցինք 1926 թվականի մայիսին Կ. Ս. Ի-ն առաջարկություններ է անում Լ. Ս. Ի-ն կազմակերպել միացյալ ճակատ ընդդեմ բուրժուական սպորտի:

Լ. Ս. Ի-ն, վորի ղեկավարությունը, վոչ միայն գործակցում է բուրժուական սպորտի հետ, այլև պաշտպանում է նրան— սոցիեմոկրատիայի գաղափարական ղեկավարութեան ներքո— ահա այդ ղեկավարները բացարձակ կերպով դուրս են գալիս միացյալ ճակատ ստեղծելու դեմ ու ամեն կերպ ջանք են դնում հեռացնելու իրենց շարքերից կոմունիստներին, կոմյերիտականներին ու բոլոր այն բանվորներին, վորոնք իրենց համակրանքն են հայտնում Կ. Ս. Ի-ն:

Բավական չի վոր նրանք դեմ են բանվորական սպորտի միասնականությանը, նրանք վոչ մի ջանք չեն ինչպե՞ս քայլաշար նաե Կ. Ս. Ի. շարքերը:



1. Ս. Ի-ն նպատակ է դրել մեկուսացնել հարմիր Սպորտ Ինտերնին ու առաջին հերթին նրա հիմնական սեկցիա կազմող Խ. Ս. Հ. Մ-ի ֆիզիկուլտուրան: Այդ նպատակին հասնելու համար, նրանք դիմում են մի շարք գործնական միջոցների՝

ա) Տարածելով զանազան պրովոկացիաներ Խ. Ս. Հ. Մ-ի ու Կ. Ս. Ի. վերաբերյալ և կըրկնելով իմպերիալիստական ազենտուրայի սարքովի լուրերը «կոմունիստական պրոպագանդայի» Մոսկվայի միջամտության և այլնի մասին, մյուս կողմից հեռացնելով իր շարքերից հեղափոխական տարրերին և նույնիսկ ամբողջ կազմակերպություններին, նրաց հաջողվեց խզելու բոլոր այն յերկրները բանվորական սպորտի կապերը ԽՍՀՄ-ի ֆիզիկուլտուրայի հետ, վորոնք ղեռ հաստատվել եյին 1926 թվից (Գերմանիայի, Ավստրիայի, Ֆինլանդիայի, Շվեյցարիայի ու Լատվիայի Լ. Ս. Ի. սեկցիաները):

բ) Այն վայրերում, վորտեղ Լ. Ս. Ի-ն չունի սեկցիաներ կամ թե ունի և նրանք չեն կիրառում իրենց ղեկավարների դավաճանական հրահանգները և ընդհակառակը Կ. Ս. Ի-ն ունի ուժեղ ազդեցություն և ուժեղ կազմակերպություններ, վորոնք որոշտորեւ աճում ու զարգանում են, — ահա այդպիսի վայրերում, Լ. Ս. Ի. ղեկավարությունը, բուրժուազիայի ոգնությամբ, ինչպես ասում են «գոռով» ստեղծում է Կ. Ս. Ի-ն զուգահեռ իր միությունները և փոր-

ձեր անում քայքայելու Կ. Ս. Ի. շարքերը: (Ինչպես որենակ Արդենտինայում Ելզաս-Լոտարինգիայում, Անգլիայում և այլն): Այսպիսով միանգամայն բնական ու հետեւողական կլինի սոց-Փաշիստների բարյացակամ վերաբերմունքը դեպի բուրժուական սպորտը: Չ՞ե վոր բուրժուազիան ել հենց այդ է ուզում, ինչ վոր նրանք են կատարում:

Յեւ մենք տեսնում ենք, վոր քանի գնում՝ այնքան սովորական են դառնում Լ. Ս. Ի. ու բուրժուական սպորտի միջև կազմակերպվելիք միացյալ հանդիպումները ու՝ մրցումները — բոլոր յերկրներում:

Մի փոքրիկ բայց հետաքրքիր փաստ բերենք, վորից արդեն պարզ կպատկերացվի Լ. Ս. Ի. տակտիկան հանդեպ բուրժուական սպորտին:

Մոտիկ անցյալում Լ. Ս. Ի. Բյուրոյում քննվում եր իրենց Պաղեստինի սեկցիայի հարցը, վորը հաճախակի ընկերական մրցումներ է կազմակերպում, Պաղեստինի նացիոնալիստական շովինիստական սպորտի ու անգլիական օկիլուպացիոն գործերի սպորտ խմբերի հետ:

Վորոշվում է՝ — Չարգելել, թույլատրել այդպիսի մրցումներ, վորովհետեւ չկա ուրիշ հարմար կազմակերպություն, վորի հետ նրանք մրցումներ կազմակերպեն. (!!!):

Բայց մենք մեծ սխալ գործած կլինենք, յեթե կարծենք, վոր Լ. Ս. Ի-ն չառ հեշտու-

Թյամբ և պայքարում Կ. Ս. Ի. դեմ ու հեշտու-
թյամբ առաջ տանում բանվորական սպորտի
քայքայման գործը: Ընդհակառակը սոց.-ֆա-
շիստների հենց այդպիսի գործողություններն
են, վոր բացում են բանվոր սպորտամենի աչ-
քերը: Բանվոր սպորտամենները—ընդհանուր
բանվոր դասակարգի հետ միասին կոմիվելով
դասակարգային պայքարի բովում, որեցոր հե-
ղափոխականանում են: Նրանք թեքվում են
դեպի պրոլետարական հեղափոխությունը, նը-
րանք իրենց համակրանքն են հսկանում կար-
միր Սպորտ ինտերնին, նրանք թողնում են
Լ. Ս. Ի. շարքերը և անցնում Կ. Ս. Ի.: Այլ
կերպ չի կարելի բացատրել այդ հսկայական
հեռացումները, ինչպես վերը նշեցինք, վորը
կատարում է Լ. Ս. Ի. իր շարքերում ու այն
հսկայական ուղղորդիչի, վոր գոյություն
ունի այժմս Լ. Ս. Ի. մեջ:

Շնորհիվ Կ. Ս. Ի. ու նրա սեկցիաների
անհաշտ ու յեռանդուն պայքարի, նրա շար-
քեր որըստորե աճում ու ամրանում են ի հա-
շիվ պրոլետարական ելեմենտների:

1930 թվի տվյալներով Կ. Ս. Ի. ցանցը
պատկերացվում է հետևյալ կերպ.—

ա) Հիմնական սեկց.	բ) Կ. Ս. Ի. հարող կազմակերպու- թյունները	գ) Ուղղորդիչներ խմ- բեր (Լ. Ս. Ի. ներսում)
ԽՍՀՄ մոտ 4000.000	Եղապոստային- գիւ 14.000	Ֆինլանդ. 19.700 հ.
Չեխոսլովակ. 80.000 հ.	Բրազիլիա 1.000	Սվետլիա 2.000 ,
Ֆրանսիա 12.000 ,	Կանադա 1.000	Դերմանական 26-
Ուրագվայ 3.000 ,		խոսլովակ. 6000 ,
Արգենտինա 2.000 ,		Շվեյցար. 15.000 ,
Նորվեգիա 30.400		Գերման. 100.000 ,
Շվեդիա 7.000 ,		Եստոնիա 1.200 ,
ՀԱՄՆ 10.000 ,		Դանիա 500 ,
Հունաստան 1.600 ,		
Անգլիա 4.000 ,		

«Կ. Ս. Ի. կողմնակիցները չպետք է հրա-
ժարվեն Լ. Ս. Ի. սեկցիաների ներսում աչ-
խատանքից, այլ ընդհակառակը պետք է անեն
ամեն ինչ հարկավոր սահմաններում—աշխա-
տավորական տարրերին իրենց շուրջը համա-
խմբելու և իրենց շարքերը ներգրավելու հա-
մար»: (Կ. Ս. Ի. 4-րդ կոնգրես):

Միացյալ ճակատ ստեղծելու գործում քիչ
դեր չի խաղում նաև կազմակերպվելիք միաց-
յալ յեղույթները: «Կ. Ս. Ի. բոլոր սեկցիա-
ները պետք է աշխատեն Լ. Ս. Ի. կազմակեր-
պությունների հետ, հակառակ նրա ղեկավար-
ների կամքի—կազմակերպել միացյալ յե-
ղույթներ, մրցումներ և այլն:

Կ. Ս. Ի. սեկցիաների բոլոր անդամները,
իրենց առորյա աշխատանքների ընթացքում,
պետք է տանեն ամենալայն բացատրական աչ-

խատանք, տեղի պրոլետ սպորտ կազմակերպությունների մեջ, պայքարի միացյալ ճակատի անհրաժեշտության մասին»։ Կ. Ս. Ի. 4-րդ կոնգրես)։

Իսկ թե ի՞նչպես պետք է վերաբերվեն Կ. Ս. Ի. կոզմակիցները հանդեպ բուրժուական սպորտը, վորի մեջ ինչպես գիտենք, կան միլիոնավոր բանվորներ,—հարց կտան մեզ։—Պատասխանը չատ պարզ է։ Յեթե Լ. Ս. Ի. նկատմամբ մենք ասում ենք, վոր քոլոր հեղափոխական տարրերը պետք է աշխատեն մրնալ Լ. Ս. Ի. շարքերը և կամ ձգտեն հեռացվածներին հետ ընդունելու, վորպեսզի նրանք այնտեղ աշխատեն ու մնացած բանվորներին իրենց շուրջը համախմբեն մեծամասնությունն իրենց ձեռքը գցելու համար, ապա նույն այդ բանը մենք չենք կարող ասել բուրժուական սպորտի նկատմամբ։ Նախ և առաջ այդպիսի հեղափոխական ելեմենտները (կոմունիստները, կոմյեբիտականները, հեղափոխականորեն տրամադրված և ընդհանրապես գիտակից բանվորները) պետք է թողնեն բուրժուական սպորտի շարքերը ու անցնեն բանվորական սպորտի մեջ։

Մնացած վոչ գիտակից մասսայի մեջ պետք է տանել լայն բացատրական աշխատանք—անհատական խոսակցությունների, հատուկ կազմակերպած ժողովների, գործարաններում դանազան հասարակական կազմակերպությունների, մամուլի և այլն միջոցնե-

րով, հասկացնել այդ բանվորներին, իրենց դասակարգային շահերը և ներգրավել նրանց բանվորական սպորտի մեջ։

ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱՐԱՆՈՎ

Դեռ 1928 թվին կայացած Կ. Ս. Ի. 4-րդ կոնգրեսն իր նշանակալից վորոշումների մեջ, կտրուկ կերպով դրեց իր սեկցիաների առաջ, հեղափոխական դաստիարակության, ագիտացիայի ու պրոպագանդայի հարցերը։

«Բոլոր բանվորական սպորտ կազմակերպությունները պարտավոր են տանել իրենց ագիտացիան—պրոպագանդան և հեղափոխական դաստիարակության աշխատանքները։ Ագիտացիայի ու պրոպագանդայի նպատակն է տարածել աշխատավորության մեջ բանվորական սպորտի դադափարը և գրավել իր շարքերը նորանոր աշխատավորական տարրերին։ Հեղափոխական դասակարգային դաստիարակության խնդիրն է դարձնել բանվորական սպորտի անդամին գիտակից, տոկուն մարտիկ դասակարգային կուլում։

«Մեր դաստիարակությունն իր հիմքում պիտի ունենա, պրոլետարական դասակարգի իդեոլոգիան—Մարքսիզմը»։

«Պրոլետարական սպորտը, դասակարգային սպորտ է, այլ վոչ թե կուսակցական։ Բանվորական սպորտ կազմակերպությունները, պիտի չինեն լայն մասսայական կազմակեր-

պուլթյուններ ու իրենց շուրջը պիտի համախմբեն իրենց դասակարգային հարազատ տարրերին»։ Մեր խնդիրն է ֆաշիստական ու սոց-ֆաշիստական ազդեցութեան տակ դուռնըլող աշխատավորներին գրավել մեր կողմը, դաստիարակել նրանց այնպես, վոր նրանք ոգնեն բանվոր դասակարգին սոցիալիզմի համար մղած ընդհանուր պայքարում։

ՊԱՅԳԱՐԻ ԱՌԱՋԱՎՈՐ ԴԻՐՔԵՐՈՒՄ

1929 թվին կայացած Կ. Ս. Ի. Գործկոմի 5-րդ պլենումը հիմնականում հաստատելով 4-րդ կոնգրեսի վորոշումները, միաժամանակ ընդգծեց այն մեծ դերը, վոր ունեն կատարելու հեղափոխական սպորտ կազմակերպություններն ընդհանուր բանվոր դասակարգի հետ պայքարի ֆրոնտում և մանավանդ բանվոր դասակարգի տնտեսական պայքարի ֆրոնտում (գործադուլ, ստաչկա, բողոքի ցույցեր, լոկաուտ, ընդհարումներ և այլն)։ Բացի ընդհանուր սկզբունքային բնույթ կրող վորոշումներից, վորոնք բնորոշում են հեղափոխական սպորտ կազմակերպությունների վերաբերմունքը հանդես շտրեյկերներին, կապիտալիստների կազմակերպած գործարանային սպորտի և ռեֆորմիստական պրոֆմիություններին—միաժամանակ պլենումի վորոշումները նշում են, վոր հեղափոխական սպորտսմեններն իրենք անմիջականորեն պետք է մասնակցեն այդ պայքարին, տանելով մասսաները հեղափոխական պրոֆմիությունների ու

կոմկուլեի լոզունգների տակ։ Բացի այդ, հենց ստաչկաների ու գործադուլների ժամանակն է, վոր բուրժուական սպորտ կազմակերպություններն ու կապիտալիստների կազմակերպած գործարանային սպորտ խմբերը, սկսում են կազմակերպել մասսայական մրցումներ ու բանվորների ուշադրությունը գրավում իրենց կողմը դասակարգային պայքարից զերծ պահելու համար։ Հեղափոխական բանվորական սպորտսմենները պետք է ամենուրեք մերկացնեն բուրժուազիայի այդ գործողություններն ու պրոլետարական սպորտը գործադուլների ժամանակ ոգտագործեն հոգուտ դասակարգային պայքարի։

ՈՊՈՐՏՅՈՒՆԻՍՏՆԵՐԸ ԳՈՐԾՈՒՄ ԵՆ

Կ. Ս. Ի. չարքերում նրա կողմնակիցներին մեջ կան ընկերներ, վորոնք համաձայն չեն 4-րդ կոնգրեսի վորոշումներին ու Կ. Ս. Ի. հիմնական գծի հետ և վորոնք իրենց տշխատանքների ընթացքում, գործել են ուղղորտյունիստական սխալներ։ Այս սխալները չափազանց վտանգավոր են բանվորական սպորտ շարժման միասնութեան համար։ Հիմնականում այդ արտահայտվում է նրանում, վոր թերազնահատվում է Լ. Ս. Ի. դավաճանական դերը։ Մի շարք ընկերներ փորձում են ապացուցել, վոր Լ. Ս. Ի. ղեկավարների ու 2-րդ Ինտերնացիոնալի միջև մեծ տարբերություն կա և ինչպես նրանք են ասում «Լ. Ս. Ի.

ղեկավարներն ավելի ծախ են և ոպպողիցիոն դիրք ունեն հանդես 2-րդ ինտերնացիոնալի ու նրա քաղաքականությանը, մանավանդ սպորտի հարցերում» և այլն: Պարզ է, վոր այդպիսի սխալ դատողությունները շատ վատ հետեմանքներ են ունենում: (Ինչպես որինակ Ծինլանդիայում, Նորվեգիայում ձգտումներ Կ. Ս. Ի. շարքերից դուրս գալու և այլն): Յեվ իրոք, յեթե Լ. Ս. Ի. ղեկավարները 2-րդ ինտերնացիոնալի ղեկավարներից ավելի լավ մարդիկ են, յեթե նրանց քաղաքականությունը տարբերվում է 2-րդ ինտերնացիոնալի դավաճանական քաղաքականությունից, ապա ել ինչո՞ւ պայքարել նրանց դեմ և ինչո՞ւ նրանց հետ բանակցությունների մեջ չմտնել:

Միացյալ ճակատի լողունգը դնելով մենք հասկանում ենք միացյալ ճակատ ներքեվից— անմիջականորեն Լ. Ս. Ի. շարքերում յեղած բանվորների հետ, մասսաների հետ, այլ վոչ թե նրա Փաշխտական ղեկավարների հետ: Կան և այնպիսի ընկերներ, վորոնք պնդում են, վոր բուրժուական սպորտի շարքերում գտնվող դիտակից և հեղափոխական բանվորները չպետք է դուրս գան նրա շարքերից, վորպեսզի այնտեղ տանեն իրենց հեղափոխական աշխատանքները և իրենց շուրջը համախմբեն բանվորական տարրերին: Այս մտքի հետ համաձայնվելն անհնար է: Պարզորեն պետք է ասել, վոր այդպիսի մարդկանց մեծ մասը գրնում են բուրժուական սպորտի շարքերը, վոչ

թե այնտեղ պառակտում գցելու, նրա շարքերը քայքայելու համար, այլ նրանց գրավում և բուրժուական սպորտի ճոխությունը, նյութական միջոցների առատությունը և բոլոր այն առավելությունները, վորով ոգավում են բուրժուական սպորտի անդամները: Կան և ընկերներ, վորոնք տարվելով ծախ Ֆրազներով, հասնում են այնտեղ, վոր պահանջում են, վորպեսզի Կ. Ս. Ի. բոլոր կողմնակիցները դուրս գան Լ. Ս. Ի. շարքերից ու հրաժարվեն նրանց մեջ վորևե աշխատանք տանելուց: Պարզ է, վոր յեթե մի բնպե Կ. Ս. Ի. ան կիրառի դրանց պահանջը, ապա կստացվի այն պատկերը, վոր մեր հեղափոխական սպորտում մենները կլինեն մեկուսացված, առանց մասսայի և ոժանդակած կլինեն Լ. Ս. Ի. դավաճանական գործին:

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՎՏԱՆԳՆ ՈՒ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ
ՍՊՈՐՏ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՆԴԻՐ-
ՆԵՐԸ

(4-րդ կոնգրեսի վորոշումներից)

Բոլոր կապիտալիստական յերկրներում, բուրժուական նորանոր պատերազմների պատրաստություն և տեսնում: Նորանոր շուկաներ ձեռք բերելու ախորժակն ու ծավալվող տնտեսական կրիզիսը սրել է կապիտալիստական յերկրների իրար մեջ գոյություն ունեցող հակասությունները: Բայց և այնպես իմպերիալիստական պետություններն սպառազինվում

են առաջին հերթին ԽՍՀՄ-ի դեմ դուրս գալու համար, վորովհետև այս յերկրում պրոլետարական հեղափոխությունը խորտակել է իրենց բաղդակից կապիտալիզմի տիրապետությունը:

Ձինաթափման կոնֆերենցիաների հետևիանքն այն է լինում, վոր սպառազինումները քանի զնում ուժեղանում են:

Ապագա պատերազմների պատրաստման դործում ինչպես տեսանք, քիչ դեր չեն խաղում նաև բուրժուական սպորտ կազմակերպությունները:

Պատերազմի նախապատրաստման գործում բուրժուազիային ոգնության է գալիս նաև միջազգային սոցիալ-դեմոկրատիան: Շատ յերկրներում սոց-դեմոկրատիայի ղեկավարները հանդես են գալիս, վորպես բուրժուական բանակների ռազմական տեխնիկայի կատարելագործողները (Ֆրանսիական սոցիալիստ Պուլ-բոնկուրի ներկայացրած ծրագիրը, Շվեցիայի սոցիալ-դեմոկրատ Ալբին-Գանսոնը, գերմանական սոց-դեմոկրատների քվեարկած ռազմանափը և այլն):

Սոցիալ-դեմոկրատները, վորպես բուրժուազիայի ագենտներ լինելն ավելի պարզ աչքի յե դարնում, յերբ հարցը գալիս է պայքարելու ԽՍՀՄ-ի դեմ: Լ. Ս. Ի.-ն իր հերթին ինչպես վերը նշեցինք, լինելով սոց-դեմոկրատիայի ազդեցության տակ, ևս պաշտպանում է ազգերի լիզային, վորոշումներ է հա-

նում խզելու կապը մեզ հետ ու նպաստում է բուրժուազիայի պատերազմների նախապատրաստվելու դործին:

Կարմիր Սպորտիստները նկատի ունենալով իմպերիալիստական պատերազմի վտանգը, իր սեկցիաների վրա պարտականություն է դնում.—

ա) Կ. Ս. Ի. բոլոր սեկցիաներն ու կողմնակիցները, մամուլում, միտինգներում, ժողովներում և առօրյա աշխատանքների ընթացքում, պետք է պարզաբանեն աշխատավորական տարրերի մեջ իմպերիալիստական պատերազմի դեմ պայքարելու խնդրի նշանակությունը:

բ) Կ. Ս. Ի. առաջադրում է իր սեկցիաներին, մտնել այնպիսի կազմակերպությունների մեջ, վորոնք պայքարում են իմպերիալիզմի դեմ, ինչպես որինակ «գաղութային ճնշումների դեմ պայքարող լիգա», «Հակաիմպերիալիստական լիգա» և այլն, ԿՍԻ միանգամայն համաձայն է ԽՍՀՄ-ի կողմից առաջադրված գինաթափման կոնֆերենցիային—գինաթափման ծրագրի հետ (վորը չեն ընդունում բուրժուական պետությունները) և սպարտազրում է իր կողմնակիցներին տարածել այն, մասսաների մեջ:

գ) Բոլոր յերկրներում բանվոր սպորտը մենների մեջ պետք է դաստիարակել ԽՍՀՄ-ի հանդեպ համերաշխության զգացմունքը: Խորախուսել ԽՍՀՄ-ի հետ սպորտիվ հանդի-

պումներին ու մրցություններին: Պայքարել
Լ. Ս. Ի. ներսում, վերականգնելու իր հարա-
բերությունները ԽՍՀՄ-ի սպորտ կազմակեր-
պությունների հետ, վորովհետև բոլոր յեր-
կրների բանվորների սերտ կապը ԽՍՀՄ-ի
հետ կը ժվառացնի կապիտալիստներին իրազոր-
ծելու իրենց գինված հարձակումները ԽՍՀՄ-ի
դեմ:

դ) Անհրաժեշտ է տանել լայն բացատրա-
կան աշխատանք բուրժուական սպորտ կազ-
մակերպություններում գտնվող բանվորների
մեջ (վորոնց թիվը մեծ է), վորպեսզի նրանք
գուրս դան աշխտեղից և մտնեն բանվորական
սպորտի շարքերը:

յե) Բանվորական սպորտամենները ու
սպորտ կազմակերպությունները պետք է սերտ
կապ պահպանեն իրենց այն ընկերների հետ,
վորոնք գտնվում են բուրժուական բանակի
շարքերում:

զ) Պայքարը բուրժուական միլիտարիզմի
ու պատերազմի վտանգի դեմ չպետք է կրի
պացիֆիստական բնույթ: Պացիֆիզմը թու-
լացնում է պրոլետարիատի մարտունակու-
թյունը, կարծիք ստեղծելով, թե կարելի չէ
պայքարել իմպերիալիստական պատերազմի
դեմ գեղեցիկ ճառերով ու ցույցերով:

ե) ԽՍՀՄ-ի դեմ պատերազմի դեպքում,
Կ. Ս. Ի. կողմնակիցները պետք է կանգնեն հե-
ղափոխական պրոլետարիատի կողմը, պաշտ-
պանելու համար ԽՍՀՄ-ն:

Կ. Ս. Ի.-ն արդեն անցել է իր կազմա-
կերպական ու սեկցիաների ձեւավորման հիմ-
նական շրջանը, վորի ընացքում Ֆիզդաստի-
արակության տեխնիկայի ու մեթոդիկայի
հարցերը դրված էին հետին պլանի:

Դեռ 1929 թվի Կ. Ս. Ի. 5-րդ պլենումը
նշեց, վոր «պետք է տարածել սպորտի ամենա-
հասարակ ու մասսայական ձեւերը, այն հաշ-
վով, վոր հնարավոր լինի բանվորական սպոր-
տի շարքերում ներգրավելու նորանոր պրոլե-
տար աշխիվիստների թե բուրժուական սպոր-
տի շարքերում գտնվողներից և թե բոլորովին
սպորտի մեջ չընդգրկված տարրերից:

Մեր լողունգն է—Ավելի շատ կոլլեկտիվ
ու մասսայական մրցումներ և ընկերական
հանդիպումներ, ընդդեմ անհատականության,
ոեկորդամենականության ու բոլոր այնպիսի
սպորտիվ ձեռնարկությունների, վորոնք թու-
լացնում են բանվոր սպորտամենների զգու-
թյունն ու դասակարգային գիտակցությունը:



ՊԵՏՏՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ
ՀՐԱՏ. 1582
ԳՐԱՌԵՊ. 6213 (Բ.)
ՊԱՏ. 1087
ՏԻՐԱԺ ԹՎՈՐ

ՀՀ Ազգային գրադարան



NL0315157

9118